## Արձանագրություն N 5

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի(այսուհետ ՎԶՄԲ) միջև 2015 թ-ի ապրիլի 03-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի» 8495-ԱՄ և 2016 թ-ի մայիսի 12-ի ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM համաձայնագրերի, ՎԶՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների (այսուհետ Ընդհանուր պայմաններ) պահանջներին ԵրՋԷԿ-ի համապատասխանության ապահովման ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված՝

"ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17 ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /երկրորդ փուլի հայտերի բացման նիստի/

ք. Երևան 1 օգոստոսի 2017թ
ժ.10:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդասարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դադունցը
Ա. Զաքարյանը
Լ. Օհանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

**Օրակարգ**

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների և հասցեների վերաբերյալ:
2. Հայտեր պարունակող ծրարների կազմման եւ ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.
3. Բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ
4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.
5. Հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին.
6. Հայտերի վերաբերյալ հարցումների եւ պատասխանների մասին.
7. Հանձնաժողովի անդամների և քարտուղարի Շահերի բախման բացակայության մասին:
8. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին:
9. Հաջորդ նիստի հրավիրման մասին:

Հարց 1

"ԵՐՋԷԿ-ՆՈ 01/1․" ծածկագրով եր կու փու լով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հայտ՝ ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք թիվ 3 հասցեում, ներկայացրել է նախաորակավորված միակ մասնակից՝

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ն՝ հասցեն ք. Երևան, Չայկովսկու 34/21 , հեռախոս 011 33-00-04, DG_Consalulting@mail.ru:

Հարց 2

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

Հարց 3

Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

Ընդ որում՝ գնային առաջարկ պարունակող ծրարը, որը համապատասխանում է հրավերին, չի բացվել, այն դրվել է առանձին ծրարի (տուփի) մեջ, որը սոսնձվել է, ծրարի վրա ստորագրել են նիստին ներկա գնահատող հանձնաժողովի անդամները եւ քարտուղարը, վերջինս այն վերցրել է ի պահ:

Հարց 4

Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերով սահմանված վավերապայմաններին:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

Հարց 5 Հայտերի հետևանչում և/կամ փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Հարց 6 Հայտերի վերաբերյալ հարցումներ եւ պատասխաններ տեղի չեն ունեցել:

Հարց 7 Հանձնաժողովի անդամները եւ քարտուղարը ստորագրել են հայտարարություն շահերի բախման բացակայության մասին:

Հարց 8 և Հարց 9 Ղեկավարվել՝ "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերով սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

**Գնահատող հանձնաժողովը Որոշեց՝**

1. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝

ա/ Հայտը պարունակող ծրարները կազմված եւ ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.

բ/ ներկայացված ծրարում առկա են հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

գ/ փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝

ա/ ոչ ուշ, քան երկրորդ փուլի հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) ներկայացնել հայցում հայտ ներկայացրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ/ ոչ ուշ, քան երկրորդ փուլի հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի անդամների և քարտուղարի՝ "Շահերի բախման բացակայության մասին" հայտարարությունը, սույն արձանագրության հետ միասին՝ բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում.

3. Հաջորդ՝ հայտերի գնահատման նիստը հրավիրել սույն որոշման 2-րդ կետի ա/ ենթակետով նախատեսված հայցումն ուղարկելուց հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ, քան Կոմիտեից տեղեկատվության ստացմանն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդասարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դադունցը

Ա. Զաքարյանը

Լ. Օհանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը